



**ԳԵՈԹԻՄ**

ԳԵՈԹԻՄ ՓԲԸ Ամսաթերթ, հունիս 2014, էջ 1



**LYDIAN**  
INTERNATIONAL

**Մալյանի թատրոնը Գորայքում և Սարավանում**

Մայիսի 26-ին Գորայքում իսկական իրարանցում էր. Երևանի Հենրիկ Մալյանի անվան թատրոնի դերասանները ներկայացնում էին Շ. Թումանյանի 10 հեքիաթները: Եկել էին համայնքի բընակիչները, մանկապարտեզի սաները, դպրոցի աշակերտները, ուսուցիչներն ու տնօրինությունը: Դպրոցի տնօրեն պրն. Թադևոսյանն իր շնորհակալական խոսքը հղեց թատրոնի դերասաններին՝ նման տոն պարգևվելու համար, իսկ Գեոթիմ ընկերությանը՝ մտահաղացման համար: «Վերջին տարիներին մեր համայնքը ամբողջությամբ կտրվել է արվեստից: Շատ տարիներ առաջ մեր համայնք այցելել են բազմաթիվ դերասաններ, երգիչներ և կազմակերպվել են նման միջոցառումներ: Մակայն շատ տարիներ նման բաներ չեն եղել: Համայնքում շատ քիչ ընտանիքներ կարող են տանել իրենց երեխաներին թատրոն, կինո: Ընտանիքներ կան, ովքեր մտածում

են գյուղից գնան, որպեսզի իրենց երեխաները հետ չընկնեն նման միջոցառումներից: Մշակութային կյանքը պետք է զարգացնել համայնքում: Շնորհակալություն նաև Գեոթիմին նման հնարավորության համար: Ես շատ կցանկանամ, որ շարունակական բնույթ կրի նման դերասանական կազմով և խաղով ներկայացումները:»



*Ընկերությունը կարևորում է բնակչության և հատկապես երիտասարդ սերնդի կրթության և իրազեկության հարցը՝ բնապահպանական հարցերի շուրջ:*

*Ուստի որոշվեց ընտրել ավելի զվարճալի և ժողովրդի կողմից սիրված միջոց, ինչպիսին է թատրոնը կամ տիկնիկային ներկայացումը, որը և ուսանելի է, և զվարճալի, և տալիս է հիանալի հնարավորություն՝ ուղերձ հաղորդելու և սերմանելու:*

**Մեր գյուղի արտագաղթում իր դերն ունի նաև մշակութային կյանքի բացակայությունը:**  
**Մ. Թադևոսյան, Տնօրեն**

**Բնապահպանական կրթություն՝ արվեստի միջոցով**

Ամժելա Հովհաննիսյանը, Գորայքի բնակիչ, կիսում է իր տպավորությունները: "Շատ հաճելի է տեսնել այս դերասաններին և նրանց խաղը մեր համայնքում, մեր դահլիճում՝ ում մենք միայն տեսնում ենք հեռուստացույցի էկրաններից: Ես բավականին հաճույք ստացա ներկայացումից և շատ կուզեմ, որ այն շարունակական լինի: Երեխաները նույնպես շատ ոգևորված էին տեսնել իրենց սիրելի սերիալների հերոսներին իրենց իսկ գյուղում: Այս թատրոնին հաջորդեց տիկնիկային թատրոնը, որը նույնպես ոգևորեց բնակիչներին՝ հատկապես փոքրիկներին: Քանի որ տիկնիկային թատրոնը հարստացված էր երեխաների սիրելի հերոսներով և երգերով՝ նրանք

հավասարապես երգում և գոռում էին դերասանների հետ: Բսկ երկու փոքրիկների մայր Թագուհի Խաչատրյանը ասաց. Հրաշալի է, որ երեխաները և ինչու չէ մենք ևս կարող ենք նման հաճելի ժամանակ անցկացնել մեր համայնքում և ցրվել առօրյա հոգսերից: Երեխաներն էլ բացի դրսից և խաղերից կղիտեն և կսովորեն նման ուսուցողական և ուրախ ներկայացումներից:



**ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ՝**  
**Մալյանի թատրոնը 1 համայնքներում**  
**"Շահագրգիռ կողմեր 2 ներգրավման պլան", "Ծրագրի ոչ տեխնիկական բնութագիր"**



Սույն թվականի հունիս ամսին Ջերմուկում մեկնարկեցին շախմատատային երկու կարևոր իրադարձություն. Կարեն Ասրյանի 7-րդ հուշամրցաշարը և «Ջերմուկ 2014» մանկապատանեկան 9-րդ միջազգային՝ Ստեփան Ավագյանի հուշամրցաշարը: Այս մրցաշարերին իր աջակցությունը ցուցաբերեց նաև Գեոթիմ Ընկերությունը՝ շարունակելով համագործակցության ավանդույթը թե Հայաստանի Շախմատի ֆեդերացիայի, թե Շախմատի Ակադեմիայի հետ: Ստեփան Ավագյանի հուշամրցաշարի բացման արարողությունը մարդաշատ էր: Ջերմուկ Աշխարհը բացել էր իր դռները բազմաթիվ ծնողների, երեխաների, հյուրերի, անվանի շախմատիստների առջև: Եկել էին նաև Վայոց Ձորի մարզպետը, Ջերմուկի քաղաքպետը, Շախմատի ֆեդերացիայի և Ակադեմիայի ներկայացուցիչները, ՀՀ-ի աշխատակիցները: Իսկ Երևանի երաժշտական դպրոցի սաները համեմեցին բացումը երգով և զվարթնությամբ: Մանկապատանեկան մրցաշարին մասնակցում էին 300-ից ավելի երեխաներ և պատանիներ Հայաստանի մարզերից, Վրաստանից, Իրանից, Ռուսաստանի դաշնությունից:




Գեոթիմ ընկերությունը վերջերս հրատարակեց **«Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան»**-ի թարմացված տարբերակը: Այն տեղակայված է ընկերության կայքում, Գնդեվազի Ամուլսար ինֆորմացիոն կենտրոնում՝ մատչելի բոլոր ցանկացողների համար: Այս փաստաթուղթը ընթերցողին հանգամանորեն ներկայացնում է Ծրագրի ներկայիս փուլին առնչվող մանրամասներ.

Ծրագրի ենթակառուցվածքի քարտեզը և աշխարհագրական դիրքը, շահագրգիռ կողմերի հետ ներգրավման պատմությունը, գանգատարկման մեխանիզմը և ինչպես է այն աշխատում, շահագրգիռ կողմերին հուզող հիմնական հարցերը, Ծրագրի առաջիկա փուլերում Ընկերության համայնքների և այլ կողմերի ներգրավման գործընթացը:

*Ամբողջ փաստաթուղթը տես <http://geoteam.am/amulsar-project/stakeholder-engagement-plan.html>*

Մինևսյն ժամանակ թողարկվել և Ինֆորմացիոն Կենտրոնում և Գեոթիմի կայքում տեղակայված է **«Ծրագրի ոչ տեխնիկական մասի բնութագիր»**-ը, որն անդրադառնում է Ծրագրի մասին մանրամասներին. տեղամասի հատակագիծ, առանձին կառույցներ և նրանց շահագործումը, կույտային տարրավազման հրապարակ, կուտակման ավազաններ, ջրամատակարարում և և ջրահեռացում, Ծրագրի նախագծում և շահագործում, հանքի շահագործման ժամանակացույց, շինարարության փուլի նկարագիրը և այլն:

**Ձեզ ենք ներկայացնում Ընկերության Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը և Ծրագրի ոչ տեխնիկական բնութագիրը**



Քաջալերում ենք ձեզ ծանոթանալ այս փաստաթղթերին, դրանք կոչված են իրազեկելու շահագրգիռ և բոլոր հետաքրքրված կողմերին Ծրագրի ներկայիս փուլի մասին և թե ինչպես է պլանավորում Ընկերությունն աշխատել համայնքների և շահագրգիռ կողմերի հետ Ծրագրի նոր զարգացումների ընթացքում:

*Ամբողջ փաստաթուղթը տես [http://geoteam.am/images/amulsar/Amusar\\_Non\\_Technical\\_Project\\_Description\\_ARM\\_2014.pdf](http://geoteam.am/images/amulsar/Amusar_Non_Technical_Project_Description_ARM_2014.pdf)*

